ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***19.09.2016 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 74-ը:

Մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կարեն Իսախանյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը և բաժինների վարիչները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակին նվիրված տոնակատարությունների կազմակերպման մասին:
   /Զեկ. Գարիկ Բաղալյան – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

2. 2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականի բերքահավաքի արդյունքների մասին:
   /Զեկ. Համբարձում Համբարձումյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2016 թվականի հոկտեմբերի 2-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման ընթացքի մասին:
   /Զեկ. Ալբերտ Աղեկյան – մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ/

5. Այլ հարցեր:

Հայտարարությունով հանդես եկավ՝

Գարիկ Բաղալյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. **Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) 2016 թվականի սեպտեմբերի 21-ին համայնքներում կազմակերպել Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումներ և ապահովել ազգաբնակչության ակտիվ մասնակցությունը.

2)ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2016 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ ապահովելով սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշները.

3) աշխատանքներ տանել աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

4) շարունակել իրականացնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների 2016 թվականի հոկտեմբերի 2-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով նախատեսված գործառույթները.

5) սեղմ ժամկետում ավարտին հասցնել ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներին 2016 թվականին և նախորդ տարիներին բաշխված սերմացուների՝ գարի ու առվույտ, վառելանյութի ու պարարտանյութերի գումարների հավաքագրման գործընթացը և տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին.

6) ուշադրության կենտրոնում պահել համայնքներում կարտոֆիլի և կաղամբի բերքահավաքի գործընթացը և անհրաժեշտության դեպքում աջակցել գյուղացիական տնտեսություններին:

ՄԱՐԶՊԵՏ՝ **ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**